

Հ Ի Ն Ք Ա Ա Ր

Տաղ Համբարձման Տեսուն .

Առակալի ահիւ պակեան հոյքը բոցեղինաց խըմբիցն
Շեսեալ մերունակ կերպիւ ըզջէր համբարձեալ յերկին ,
Ռըկնաթուիչ ամպօք լուսոյ հրակերպեան կառօք ճեմեալ .
Ֆայլին նշուլից ձորձոյն՝ կարմրերփեան բոսոր վառեալ
Արեամբ ծաղկերանդ պըճնեալ , վէր մահու յինքեան ցուցեալ :
« որ իմն ահաւոր տեսիլ , խոցուած բևեռաց տիգին : —
» Վ է սա դիմեալ յերկրէ , զեսայեան գոչէր ձայնէր ,
Արլացմամբ հըզօր փառօք յերկինս ելանէր առ Հայր
» Վեր քան ըզհրաշ խորհուրդ , գերակայ անցեալ ըստ միտո
Դական բանին յայտնեալ՝ զիսորհուրդն ծածկեալ յազգաց :

Ես խօսիմ զարդարութիւն , զանճառ փրկութեան խորհուրդ .
Զհընձանըն հարի , զըրցեալ զողկոյզն ի խաչին ճըմիեալ ,
Զգինին ամփոփեալ ի յարկ ի յեկեղեցւոյ սըրբոյ .
Գըլուխ իմ լրցաւ ցողով , վարս իմ * մանր անձրեւով ցայթեաց
Գոյն պատմուճանիս ներկեալ վարդադոյն արեամբ խաչին :

Լնկճեալ վանեցի ըզհսկայն , զվիշապըն կարթիւ կալեալ՝
Զխալամն հատեալ բարձեալ ի ձըկնորսացն ուս եղեալ ,
Խաղալիկ մանկանց տըւեալ որդւոց Սիովի նորոյ :
Զդրամն արքայական դըտի վերառեալ յաղտից տըղմոյ :
Զոչխարըն մոլար բարձեալ ուսովք ի բարձունս բերեալ :
Գուք մի զարհուրիք հրեղէնք վեհք եւ լուսեղէն հողիք .
Խշանաց հրամայեցէք ի վեր համբառնալ ըզդրունս .
Մեծի հարսանեաց պարուց խընճոյս կաղմեցէք հրաշիք .
Եւ ուրախակից լերուք հողանիւթեայ բնութեան սեռից :
Մըտեալ ի յերկինս երկնից եւ չօր ընդ աջմէ նստեալ :
Արդ եկայք մանկունք լուսոյ , տօնեսցուք մեծաւ յուսով
Եւ անճառ երանութեան առնել զմեղ հաղորդ յայնժամ՝
Յորժամ մերունակ կերպիւ ծագէ ի յերկնից փառօք :
Նըմա միայնոյ տացուք զփառս ի յաւիտեանս . ամէն :

* Յօրինակին քո :